

ԱՄՆ-ի օգնության կազմակերպումն ու  
1918-1920թթ. Հայաստանի Հանրապետությունը

Առաջին համաշխարհային պատերազմը թողեց աղետի մի քանի գոտի. ցամաքային Եվրոպան, Բալկանները, քայքայված Օսմանյան կայսրությունն, քաղաքացիական պատերազմով պատած Ռուսաստանն ու անայի դարձած Արևմտյան Հայաստանը: 26 ազգ՝ 300-ից մինչև 400 հարյուր միլիոն մարդ տանջվում էին սովին հասնող պարենի սուր պակասից: Նրան գումարվում էին համաճարակներ, ճակատից վերադարձած զինվորներին սպասող քաղաքացիական արտադրության բացակայություն, ռազմական գործարանների ապրանքի անպետք դառնալը, բազմաթիվ քաղաքների և ուղիների կորուստը:

Հետագայում ԱՄՆ-ի նախագահ դարձած Յ.Հուվերի, Ջ.Բառնսի, պարենավորման հարցերով խորհրդական Ալոնսո Թեյլորի, իրավական խորհրդական Ռոբերտ Տաֆտի և Հուվերի քարտուղար Լյուիս Ստրոսի գնահատանքներից ելնելով եվրոպացիներին բաժանեցին 5 խմբի.

- Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Պորտուգալիան ու Հունաստանը կարող էին առնել ու փոխանակել ապրանքը գաղութներում, նրանց վարկեր էին հարկավոր, իսկ փոխադրամիջոցներ կային:

- Իսպանիան, Հոլանդիան, Ղանիան, Նորվեգիան, Շվեդիան, Շվեյցարիան օգնության կարիք չէին զգում:

- Եվրոպայի հարավ-արևելքը, Ֆինլանդիան, Սերձբալթիան և Անդրկովկասը «ամեն ինչի սուր պահանջի մեջ էին՝ նրանց հարկավոր էին վարկեր, մթերք, հումք ու փոխադրամիջոցներ»<sup>1</sup>: Նրանց կառավարություններն ունեին ներկայացուցչական ուժ, թեև հեղափոխական էին ու խամ կառավարման գործում: Նրանց իշխանությունը մնում էր ցարիզմի և կոմունիզմի ներգործության ներքո:

- Հակառակորդ Գերմանիային, Ավստրիային, Հունգարիային ու Բուլղարիային հատուկ էին նույն վարչական հատկություններ: Նրանք ունեին ոսկու պահեստներ, բայց նավերը ենթակա էին բռնագրավման, իսկ գործազրկության մակարդակը աղետալի էր: Թուրքիան չունեւր իսկ ընդունելի իշխանություն, ու երրորդ ու չորրորդ խմբի ժողովուրդները «պարզապես մեռնում էին» պատերազմի պայմաններում:

- Իսկ Խորհրդային Ռուսաստանի 170 միլիոն բնակիչներ դիմակայում էին սովին ու ավերածությանն, և այդուհանդերձ նրա քարոզվող գաղափարները տազնապահար էին անում մնացածներին:

Նման միջավայրում, մայր ցամաքի քայքայված երկրների կողքին առանձնանում էին համեմատաբար բարեկեցիկ Բրիտանական կայսրությունն, որն թեև կորցրել է 910 հազար զինվոր, այնուամենայնիվ կռիվ չի տեսել հայրենի կղզիներում, և Ատլանտյան մյուս կողմում զար-

<sup>1</sup> Hoover H. The memoirs of Herbert Hoover. Years of adventure 1874-1920. NY, Macmillan, 1952, p.284.

գացող, իրականում բարօր ԱՄՆ-ը, որն մատակարարում էր հաց, զենք ու վարկեր:

Նոր հսկայի մուտքը համաշխարհային և Արևելյան քաղաքականությունն յուրօրինակ էր ու պարզ: Միացյալ Նահանգներն անում էին այն, ինչ ակնհայտ էր, ելնելով իրադրության թելադրանքից, ու բնական էր, իր ներուժ ունեցող երկրի համար: Եվրոպային հարկավոր էր հացը, և Ամերիկան հաց էր ուղարկում: Եվրոպան փող չուներ, հետևաբար՝ նրան վարկ էին տալիս, ապրանքի հետ միասին: Պատերազմից հետո պահանջարկը մեծ էր՝ ուստի ԱՄՆ-ը դառնում էր գլխավոր միջնորդ երկու մայր ցամաքների միջև: Նա առևտրական նավատորմ ուներ, ու դառնում էր գլխավոր փոխադրող: Ու վերջապես, բացվում էին նոր շուկաներ, իսկ նրանցում ռազմական եղանակով հաստատվելու համար չկար ոչ պատրաստականություն, ոչ էլ քաղաքական ձգտում, մանավանդ այդքան մեծ կորուստներից հետո:

Չետևաբար, Յ.Յուվերի սցենարի համաձայն, իր պետությունը չէր խառնվում նոր սահմանագծերի ձևավորմանն ու հաստատվում էր տնտեսության, պարենային մատակարարումների և մարդասիրական օգնության միջոցով, ինչն ուղեկցվում էր երկարատև վարկերով: Սեփական գյուղարտադրանքի համար հատկացված վարկերը բացում էին նոր շուկաներ, ապահովում ֆերմերի վաստակը, հեշտացնում սեփական տնտեսության ապառազմականացում և ապահովում էին ԱՄՆ-ին Ատլանտյան երկու ափերի միջև կատարվող, հատիկի և մսի արևտրի համաշխարհային միջնորդի դերը: Չէ որ նրանք՝ Միացյալ Նահանգները, արտադրում էին Եվրոպային հարկավոր 31-32 մլն.մ.տ.բեռներից լոկ 16,7 տոկոս: Մնացածը գնում էին Արգենտինայում, Կանադայում ու նույն կիսագնդի այլ պետություններում: Որպես վճար ուզում էին ստանալ գաղութային պիտանի ապրանքը, որի գինը պիտի սահմանվեր ըստ ամերիկյան շուկայի իրադրության:

Վ.Վիլսոնը ձգտում էր խուսափել Մեծ Բրիտանիայի հետ սպառազինման լայնածավալ մրցավազքից, թեև ինքը չէր էլ հրաժարվում մեծացնել ազգային ռազմական նավատորմը: Նախագահը չէր ուզում լրջորեն հակադրվել Ռուսաստանին կամ ունենալ այլ խոշոր խուճեր, ուստի նրա, միջազգային նոր կազմակերպության մասին դրույթները ամփոփում էին գաղութների սպառողական շուկաներին բոլորի համար հավասար և ազատ մուտքի պահանջը: Շեշտելով գաղութային ցանցի գնորդի, այլ ոչ թե հունքի կարևորությունը, այդ մուտքը պետք է փոխհատուցեր պատերազմի դաշտում ԱՄՆ-ի վճռական մասնակցությունն ու խաղակիցների կուտակված պարտքերը՝ 250 մլրդ.դոլարներ, որոնք նրանց մարտակիցներն «երբեք էլ չէին կարողանա վճարել»<sup>2</sup>:

Ընդ որում, գոյություն ուներ երկու մրցորդ ծրագիր՝ Յ.Յուվերի

<sup>2</sup> Hoover H. Op.cit., p.283.

սցենարն ու Վ.Վիլսոնի միջազգային Լիգան: Առաջինը արտաքին ասպարեզն էր բացում ֆերմերներին և արևտրին, երկրորդը այն բացում էր արդյունաբերությանը: Նախագահը զուգորդում էր առկա տարբերակներն, իսկ Ծերակույտն ուղեկապեց իրենց ղեկավարի այն գաղափարներն, որոնք չափազանց ծախսատար է համարել: Ի վերջո, արտաքին գործունեության կրճատումը հանգեց տնտեսության բոլոր ճյուղերին հարվածն հասցրած 1920-1921թթ. ճգնաժամի: Որպես արդյունք՝ ժողովրդավարականները կորցրել էին իշխանությունը: 10 տարիներ անց գործող նախագահ Յ.Յուվերը նորից գերծ կմնա իր երկրի գործարաններով զբաղվելուց, իսկ նրա հաջորդացու Ֆ.Դ.Ռուզվելտը կընդլայնի Յուվերի տեսակետն ու 1929-1933թթ. խոշոր ճգնաժամը վերացնելու են համընդհանուր կարգավորման եղանակով:

Այդ ուսմունքի առաջին մարմնավորումն դարձավ Ամերիկյան պարենավորման վարչությունը (ԱՊՎ-ն), որը գործեց 1917թ. մայիսի 9-ից մինչև 1919թ. փետրվարի 7-ը<sup>3</sup>: // -96 Յիմնարկը ուներ 7 մլրդ. դոլ. շրջանառություն ու երբևէ չի ստուգվել Կոնգրեսի կողմից: Նա ֆերմերներից հատիկն էր առնում 1 կիլոգրամ 33 ցենտով և այն վաճառում արտասահմանում՝ 39 ցենտով, ինչն ապահովում էր 18,2 տոկոս եկամուտ: Յանելով փոխադրավարձն ու հիշելով պատերազմի տարիներին հատուկ վերավաճառքների չափերը պետք է արձանագրել, որ վարչության եկամուտը բավականին համեստ էր: Կ.Պոլսում, օրինակ, որտեղ 20.278 տ.ալյուր 2.369.404 դոլարով վաճառեցին տեղի խանութպաններին, նշելով թույլատրելի մանրածախ գինը, այն մեկ օրվա ընթացքին նվազեց երկու անգամ:

Կոնգրեսը հատկացրեց ծրագրի համար 150 մլն. դոլ., ինչից էլ սկսվեց ԱՊՎ-ի Յատիկային կորպորացիա, որի նախագահը դարձավ Ջուլիուս Բառնսը, իսկ տնօրեն՝ Յերբերտ Յուվերը: Պետությունը հսկում էր իրադրությունը, իրեն վերագրելով իրականացման ողջ շղթայի առաջին ու վերջին գործարքը՝ նա ինքն էր առնում հացն՝ այն հանձնելով փոխադրողներին, ու ինքն էլ բաշխում բերածը գաղթականներին: Մի կողմից, նա ավելի շատ էր գործակցում առևտրական դրամագլխի հետ, մյուս կողմից՝ ավելի էր հսկում դրա աշխատանքը: Վերջի վերջո՝ պետության հետ աշխատելը միշտ էլ պարունակում է նրան ստորադաս լինելու հանգամանք:

Արդյունքում, 1918թ. Դաշնակիցներին հասցրած պարենից, ԱՄՆ-ի բաժինը աճել է մինչև 41 տոկոս, հաջորդ տարում՝ մինչև 53,5 տոկոս: 1920թ. այն նվազել է 43,3 տոկոսի: Եթե նկատենք, որ Յ.Յուվերի մշակումը ուներ ներքին և արտաքին քաղաքականության բաղադրիչը, ապա առաջինը՝ պատերազմի և ԱՊՎ-ի գործունեության 19 ամիսներում մթերքի գներն աճեցին լոկ քառորդով, իսկ մեծածախ ու մանրա-

<sup>3</sup> Վ.Վիլսոնը ձևափոխման հրամանն արձակեց 1918թ. նոյեմբերի 7-ին, սակայն անցողիկ շրջանը տևեց ևս 3 ամիս:

ծախի տարբերությունը կազմեց ընդամենը 0,6 տոկոս: Ու եկրորդը՝ դառնալով խոշոր մատակարար՝ Վաշինգտոնը չէր ձգտում ստանալ Ռուսաստանի հացահատիկի մրցակցություն եվրոպայում: Թեև Բրիտանիան, նվազեցնելով Ռուսաստանի դիրքերն Հայաստանում ու ստանալով Ա.Դենիկինի պարտությունը՝ 1920թ. վիճակով հավանում էր խորհրդային իշխանության հետ ապրանքափոխանակում որպես հակակշիռ և ամերիկյան գներ փոքրացնելու միջոց: Ընդ որում, պատերազմական ու ետպատերազմյան ժամանակի մատակարարումները թելադրում էին զանազան մոտեցումներ՝ ԱՄՆ-ի նախագահը կարգադրեց վերակազմել ԱՊՎ-ն, որպեսզի նոր հաստատությունը կենտրոնանա եվրոպայի վրա, վերջինն էլ, իր հերթին, փորձեց իր հսկողության տակ առնել ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականությունը:

Լոնդոնում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ, որոնցում Դաշնակիցներն առաջարկեցին «երկրագնդի լիակատար [ու համատեղ] տնտեսական հսկողությունը, որն պետք է շարունակվեր մի քանի տարի: Նրա եղանակը ընդգրկում էր գների և ածխային պահեստների օգնությամբ՝ ծովային փոխադրումների հսկողություն, վարկերի տրամադրում, հոլմքի և մթերքի մատակարարում»: Միաձայն որոշումների պարագայում ԱՄՆ-ը պետք է դառնար չորս կառավարող երկրներից մեկը: Նրան առաջարկում էին վարչական խորհրդի, ծայնի իրավունքից զուրկ նախագահի պաշտոնը, ինչից փոխարեն հայցում էին գների իջեցում: Ի պատասխան, նոյեմբերի 13-ի հեռագրով Յ.Յուվերը՝ Վ.Վիլսոնի հավանությամբ, հաղորդեց. «Մենք մեզ խնամատար ենք համարում ամեն տեսակ մեր հավելյալ արդյունքի: ... Մենք չենք կարող ձեռնարկել որևէ... միջոցներ, որոնք հսկողության տակ կդնեն մեր հետպատերազմյա արտահանումը»: Նոյեմբերի 16-ին Յ.Յուվերը լրացրեց, որ նրա երկիրը չի հրաժարվում Գերագույն տնտեսական խորհրդում իր մասնակցությունից, սակայն այդ մարմինը հարկավոր չէ վերացնել միջազգային մշտական կազմակերպության: «Միացյալ Նահանգների տնտեսական հզորությունը պետք է լինի միանգամայն անսպառ խաղաղ կոնֆերանսում, քանի որ մեր ձեռքերում այդ ուժը կարող է վերածվել հզոր մի պիտույքի, որն մեզ թույլ կտա ապահովել մեր հայացքների ընդունումը»:

Դեկտեմբերի 12-ին, Փարիզում, Մոնտենի փ. 51-ում իրենց աշխատանք են սկսել ԱՊՎ-ն, Հատիկային կորպորացիան, Շաքարե կայունարար վարչությունն ու Բելգիային նպաստամատույց կոմիտեն: Նրանց գործակից էին ռազմական ու ռազմա-նավատորմային նախարարությունները, զանձատան քարտուղար Բ.Գլասը, զորավար Ջ.Պերշինգը, ծովակալ Վ.Բենսոնն ու դիվանագետ Յ.Գիբսոնը, որն պատասխանատու էր ԱԳՆ-ների հետ կապերի համար: Յ.Յուվերի 2.500 աշխատակից ստացել են ավելի քան 100 բեռնակիր նավ, ու Վ.Բենսոնի համաձայնությամբ նրանք մերժեցին եվրոպական շրջափակումը, որն կազմակերպված էր չեզոք ու նորաստեղծ պետությունների հանդեպ: Ռ.

Տաֆտը պատասխանատու էր Փարիզում իրականացվող աշխատանքի համար, Լ.Ստրոսը օգնում էր Յ.Յուլիերին, գնդապետ Ջ.Լոգանը վերջինի շտաբի պետ էր, գնդապետ Ա.Բարբերը բաշխում էր մատակարարումները, դոկտորներ Ա.Թեյլորն ու Վ.Կելլոգը գնահատում էին այն 18 տուժված երկրների կարիքները, որտեղ ուղարկեցին հատուկ առաքելություններ, իսկ Չատիկային կորպորացիայի ղեկավար Է.Ֆլեշը զբաղվում էր գնումներով, փոխադրամիջոցներով ու դրամական հաշվարկներով: Դեկտեմբերի 15-ին, ԱՄՆ-ի նախագահի ժամանումով ու առաջին անձանց բանակցություններից ի վեր Յ.Յուլիերին նշանակեցին օգնության ու վերականգնման տնօրեն, որն անմիջապես հաշվետու էր չորս համաշխարհային առաջնորդներին:

Այն պահին Եվրոպան արտադրում էր հացազգիների միջպատերազմյան բերքից 60 տոկոս, յուղն ու մսից 40 տոկոս ու պահանջ ուներ այս ու շատ այլ ապրանքների: Հաշվի առնելով, որ ԱՄՆ-ը հատկացրեց 2,7 մլրդ. դոլ. վարկեր՝ նրանց խաղակիցներին դժվար էր մերժել Վաշինգտոնում մշակած ծրագրերը: Այդ ընդհանուր գումարից 305 մլն. կանխիկ դրամ ու ապրանքներ էին, ևս 325 մլն. կազմում էին բարեգործ նվիրատվություններ: Մինչդեռ, այդ աշխատանքի բրիտանական բաժնեմասը հավասար էր 157 մլն., իտալականը՝ 54,5 մլն., ֆրանսիականը՝ 46 մլն.: Բեռնակիր նավերի տարողությունը վերցրած, Եվրոպայի Տերությունները ապահովում էին մեկ տասներորդն ու վարկերի ամբողջ ծավալի ընդամենը 5 տոկոս: Փոխադրումների ևս 10 տոկոս ապահովում էին այն չեզոք պետությունները, որոնց կարգավիճակը այդքան գրգռում էր նրանց, հաղթանակ տարած հարևաններին<sup>4</sup>:

Արևելքում ու Եվրոպայում հաստատման ամերիկյան նախագծում բնականապես գրանցվել են ինչպես համընդհանուր պատերազմի ահրելի ավերակներն, այնպես էլ հասարակական մեծ ցնցումների հնարավորությունը: Այդ առումով Հայաստանը գուցե ամենից շատ կորուստներ կրող հողն էր, որտեղ լրացուցիչ միջամտության բացակայության դեպքում ժողովուրդը կորող էր կործանվել:

ԱՄՆ-ում տեղյակ էին Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի մասին, ուր ամերիկացիք հաստատվում էին քայլ առ քայլ, իրենց քարոզիչների և առևտրի օգնությամբ: 1915թ. սեպտեմբերին Նյու Յորքում ստեղծվեց

<sup>4</sup> H.Hoover. The memoirs of Herbert Hoover. Years of adventure 1874-1920. NY, Macmillan, 1952, p.240-245, 270-271, 278, 285, 297, 302, 312, 396; Why continued and undiminished relief in the Near East is imperative. NY, 1919. US National Archives microfilm publications, RG 59 records of the Department of State relating to international affairs of Armenia, 1910-1929, 860J.4016P81/600-86J.48/199, T1192, Roll 7, NA and records service, General services administration. Wash., 1975, 860J.48/1, folio 83-85 (այնուհետև՝ US NA), գրանցված է Հայաստանի ազգային արխիվում որպես միկրոժապավենների հավաքածու, հ.36 (այնուհետև՝ US NA, T1192/R7/ՅԱԱ մհ36); Հայաստանի ազգային արխիվ (այնուհետև՝ ՅԱԱ) ֆ.200, ց.1, գ.20, մ.3, ք.183Ա-185; The Senate should reject the Turkish treaty. NY, American committee for the independent Armenia, 1923, p.5:

Ջ.Լ.Բարտոնի Հայ օգնության կոմիտեն<sup>5</sup>, իսկ 1916թ. հոկտեմբերին Վ. Վիլսոնը հայտարարեց օգնության համազգային երկօրյա ձեռնարկում: 1918թ. սկզբին հավաքած նվիրատվությունների արժեքը ավելի քան 11 մլն. դոլար էր: // -97 Այնուհանդերձ, նույնիսկ 1917թ. ապրիլից հետո Վաշինգտոնում Թուրքիային պատերազմ չեն հայտարարել, այնտեղ՝ փորձագետների մշակումներից սկսած ընդհուպ մինչ նախագահի 14 կետերը արևմտահայերին շնորհում էին լոկ ինքնավարություն<sup>6</sup>: 1918թ. մայիսի 28-ից, երբ անկախ Հայաստանը իրականություն դարձավ, թեև ոչ թե Արևմտյան, այլ համարյա նույն չափ ավերված ու վտանգված Արևելյան Հայաստանի մեկ մասում, հանրապետությունում կար Հայերին օգնության կոմիտեի կովկասյան ճուղի ներկայացուցիչ Ջ.Էլդերը միայն, որը զուրք էր աշխատակազմից ու ֆինանսական միջոցներից: ՀՀ իշխանությունն ամեն հնարավոր էր անում իրավիճակը մեղմելու նպատակով: Մինչև տարվա վերջը՝ սեպտեմբերի 28-ին, հոկտեմբերի 8-ին, 11-ին, 26-ին, նոյեմբերի 4-ին, 23-ին, դեկտեմբերի 3-ին ու 28-ին, ընդունվել են գաղթականության վերաբերող ինն օրենքներ<sup>7</sup>: Նրանք վերաբերվում էին մարդկանց աշխատանքով և անտեր հողերով ապահովելուն, ավերված գյուղերի կացարանների նորոգման, մասնավոր ու պետական ջուլհականոցների, որբանոցների բացման, բժշկասանիտարական կարիքներին, արևմտահայերի երկրորդ համազումարի ժողովման, Բաքվի աղետյալներին, Վրաստանում ու Պարսկաստանում կուտակված փախստականներին սատարման:

Իրականում, մինչև Մուղրոսի զինադադարն ու 1918 թվականի վերջը Հայաստանին որևէ նշարելի օգնություն հասցնել չէր ստացվում. նոյեմբերի 23-ին ՀՀ Խորհուրդն իսկ որոշել է Ամերիկյան հայանպաստ միսիային երեք ամսով մեկ միլիոն ռուբլի անտոկոս վարկ բանալ, թեև նրա ծառայող կապիտան Ջ.Էլդերը մինչև դեկտեմբերի կեսը զուրկ մնաց և դրամից, և աշխատակազմից<sup>8</sup>: Իրականացվող կազմակերպչական աշխատանքի պտուղները ճաշակելի էին դառնում ավելի ուշ, եկող տարվա գարունից սկսված:

Այդ ժամանակից ի վեր իրադրությունը փոխվեց: Եթե սովից կործանվող գաղթականները արթնացրին մարդասիրական վիթխարի

<sup>5</sup> Ա.Վրացյան: Հայաստանի Հանրապետություն: Երևան, Հայաստան, 1993, էջ 251-254; J.L.Barton. Story of Near East Relief (1915-1930). NY, 1930, p.5-6, 12; R.R.Trask. The United States response to Turkish nationalism and reform, 1914-1939. Minneapolis, University of Minnesota, 1971, p.9-12, 30, 105, 171.

<sup>6</sup> D.H.Miller. My diary at the Conference of Paris, with documents. Vol.II. NY, 1928, p.430-431; L.E.Gelfand. The Inquiry: American preparations for peace, 1917-1919. New Haven, 1963, p.26; R.S.Baker. Woodrow Wilson, life and letters. Vol.VII. NY, 1939, p.254:

<sup>7</sup> ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.86, ք.6A-14, 20; Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ): Կազմ.Ս.Միրզոյան և ուր., խմբ.Ս.Միրզոյան, Ֆ.Սամիկոնյան: (Երևան, ՀՀ Ազգային ժողով, Պատմության կենտրոնական պետական արխիվ, 1998), 6-8, 11-12, 15-16, 20, 31.

<sup>8</sup> ՀԱԱ ֆ.370, ց.1, գ.34, ք.15-15A:

պոռթկում ու զանգվածային աջակցություն, ապա ռուսական հեղափոխություններից ծնած Հայաստանի Հանրապետությունը թելադրում էր մեկ այլ մոտեցում: Երբ՝ 1918թ. սեպտեմբերին Պետդեպարտամենտը հրապարակեց իր ձեռնարքը՝ իր երկրի հաշտության պատվիրակության համար, նրանում մերձարևելյան գծով գլխավոր մասնագետ Վ. Վեստերմանը սահմանեց «բաց դռներով» հանդերձ Հայաստանի և Սիրիայի պահապանում: Նա պաշտպանեց առանձին հայկական պետությունը՝ միջազգային հսկողության ներքո, և Նեղուցների միջազգային կարգավիճակը: Նոյեմբերին՝ պատերազմի ավարտման պահին, Հայաստանն ուներ ոչ միայն տեղական իշխանությունն, այլև անգլիական զորքեր, որոնք էլ չէին գտնում, որ սվիմների ուժը զիջում է դուլարի ուժին:

Ջորջերի տեղավորումը փրկում էր հարյուր հազարավոր շնչերի գոյությունը, թեև ինքն իրեն չէր լուծում հողի և հասարակության բոլոր հարցերը: Սկզբից, փարիզյան բանակցությունների ժամանակ, Վ.Վիլսոնը չէր հրաժարվում Արևմտյան Հայաստանի հանդեպ նրան առաջարկվող մանդատից, և որպես նրա հնարավոր ղեկավարը տալիս էր զորավար Ջ.Հարբորդի անունը: Իսկ Հ.Հուվերը աշխատում էր օգնությունը զատ պահել քաղաքական խնդիրներից և արևմտահայերի տունդարձի թեմայից: Երբ 1919թ. փետրվարին Կոնգրեսը ԱՊՎ-ի փոխարեն ձևավորեց Ամեիկյան նպաստամատույց վարչությունը (ԱՆՎ-ն), նրա ղեկավարը խստորեն քննադատեց իր ոճով բարեգործ Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի (ՄԱՍԿ-ի) աշխատանքը, և իրեն էր ուզում ենթարկել մարդասիրական ամբողջ գործունեությունը, Նեղուցների գոտուց անջատելով անդրկովկասյան համակարգը: Ու հիմնական բանակցություններից հետո միայն՝ հուլիսին, նրան հաջողվել է ՄԱՕ-ի նախագահի և Հայաստանում (օգնության գծով) Դաշնակիցների գերագույն կոմիսարի պաշտոնում հաստատել իր թեկնածուին. գնդապետ Ու.Հասկելին: //98 Սկզբից Վ.Վիլսոնը խորամանկում էր Փարիզում՝ Կիլիկիան ստանալու, պարտքերն չներելու և ամբողջ Մերձավոր Արևելքում դիրքեր ապահովելու նպատակով, իսկ հետո Ու.Հասկելը խուսավարում թիֆլիսում՝ բրիտանացի Ջ.Ուորդրոպի հետ չընդհարվելու և ՀՀ-ում ՄԱՕ-ի ցանցն տարածելու համար<sup>9</sup>:

Նրա կայացումը սկսվում է 1919թ. հունվարին: Մարդասիրական աշխատանքը գլխավորեցին Արթուր Կուրտիս Ջեյմսն՝ որպես ՄԱՍԿ-ի նախագահ, ու Ք.Դոջը, նրա հասցեով կուտակվում էին եկեղեցիների հավակած նվիրատվությունները: Պետությունը աջակցեց բեռնանավերի տրամադրությամբ: Սակայն մայրը Է.Ստեվերի դաշտային զեկուցումներն ու փետրվարի կեսերին Կ.Պոլսից հղած Հ.Հեյնցի ճեպագրերը զգուշացնում էին, որ հարկավոր են արտակարգ միջոցառումներ:

<sup>9</sup> US NA, RG 59, 860J.01/13; RG 256, 184.021/34-35 Encl.; 185.5136/39; L.Gelfand. Op.cit., p.248-249; R.Hovannisian. The Republic of Armenia. 4 vols., Berkeley & Los Angeles, University of California Press, 1971-1996, vol.II, p.52-55.

Հայաստանի Հանրապետությունում կար 1,5 մլն.տեղի բնակիչ ու 500 հազար գաղթական, որոնցից 250 հազարը սովամահ էին լինում, և իրականում, վերջի 20 օրերում նրանք բոլորը զրկված էին որևէ սննդից: Մի քանի տոնն հագուստ ու դեղորայք ժամանեցին Բաթում, սակայն Հայաստանը ներմուծվեց նրանց չնչին բաժինը: Մնացածը վաճառվեց Վրաստանում և Ադրբեջանում: Բանը հասել է դրան, որ Կոմիտեի տեղի տնօրենին սպիպված էին հեռացնել հիմնարքից, իսկ աշխատակիցների մեծ մասը ընկել է կալանքի տակ: Հ.Հեյնցը պնդում էր, որ Հայաստանն ուղղված մատակարարումները պետք է ստորադրել Փարիզում տեղակայված Հ.Հուվերի ծառայության ուղիղ կարգադրմանը:

Մարտ ամսում Կ.Պոլսում տնավորվեց 300-ի հասնող համակազմը (մայրո Դ.Ա.//99 Դեվիսի և ԱՆՎ-ի կողմից՝ գնդապետ Ջ.Պ.Կունբզի ղեկավարությամբ), քաղաք բերվեցին միլիոնավոր դոլարների արժողությամբ բեռներ: Առաջին վարչական բաժանումը նախատեսում էր ամերիկացի բուժաշխատակիցներով ապահոված 13 հիվանդանոց, իսկ Բեյրութում, Նեղուցների ափերում, Թավրիզում և Ալեքսանդրապոլում բացված 4 տեղամաս դարձավ ՄԱՕ-ի հիմք: Նրանց առաջին հոգսն էր 53,5 հազար բոլորովին որբ և 38.255 գոնե մեկ հարազատ ունեցող երեխաներ: Երկրորդ խումբը գալիս էր բուժ և սննման կետեր՝ որտեղ ապուր էր ստանում: Ինչ վերաբերում է բոլորովին թշվառներին, ապա 6 հազ.երեխա հավաքված էին Լիբանանում, 26.405՝ օսմանյան մայրաքաղաքի 14 որբանոցներում, ու 21.056-ը՝ Կովկասում: Կ.Պոլսի մասնաճյուղը ուներ Ադաբազարում, Ադանայում, Անգորայում, Բրուսայում, Ջնյուռնիայում, Իսմիթում, Խարբերդում, Կեսարիայում, Կոնիայում, Մարզվանում, Պարտիզակում, Սամսունում ու Տրապիզոնում սփռված 150 աշխատակից<sup>10</sup>:

Ապրիլի 8-ին Ամերիկյան նպաստամատույցի վարչության պետ Հ.Հուվերը Փարիզում մի համաձայնագիր կնքեց հայ պատվիրակներ Պողոս Նուբարի և Ա.Ահարոնյանի հետ: Ամսի 28-ին այն ամրացվել է Երևանում, Կովկասում այդ ծառայության ղեկավար մայրո Ջ.Գրինի և Հ.Քաջազնունու ստորագրություններով: Փաստաթղթում ասվում է. թուրքահայերի սովն կանխելու և իշխանություններին կարգն ապահովելու խնդրում օգնելու համար, ԱՆՎ-ն ու Հատիկային կորպորացիան հատկացնում են ապրիլ ամսում 5 հազ.տ.այլուր, ու կաշխատեն պահպանել մատակարարման նույն ծավալը մայիս, հունիս ու հուլիս ամիսներում: Բեռների տեղաբաշխումը կատարվելու է «կարիքի համապատասխան, և ԱՆՎ-ի ընդհանուր համաձայնությամբ», իսկ կազմակերպության ներկայացվող հաշիվներն ընդունվում էին «որպես վերջնական և անհերքելի՝ բոլոր սննդամթերքի քանակի, արժեքի ու մատակարարումների նկատմամբ»: Գինը հավասարեցվում էր ԱՄՆ-ում եղած չափերին, գումարած վերադիր ծախս (միասին՝ 25 ցենտ կիլոգրամի համար) ու 5

<sup>10</sup> ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.20, մ.1, ք.35-35Ա; գ.638, մ.3, ք.171:



տոկոս շահույթ:

Հանրապետությունն և ազգային պատվիրակությունը, ինչպես և «ցանկացած իրենց հաջորդացուներն Հայաստանում, կամ դրա ցանկացած մասում» պատասխանատու էին այլուրի վճարման, փոխադրման ծախսի և բեռնաթափման համար: Հաշիվը փակվում էր Նյու Յորքում, (ոսկեդրամ) դոլարներով, կամ կառավարությունը հատկացնում էր մեկ մասը տեղի դրամով, իսկ մյուսը՝ ԱՆԿ-ին ընդունելի մուրհակներով: //-100 Պարտքերը կարելի էր մարել փոխանակմանը պիտանի արտադրանքով, ընդ որում, նույն պայմաններով, ինչպիսիք տրամադրվեին ցանկացած ուրիշ ձեռներեցին: (Երևանյան գանձատան՝ 5 միլիոնի հետագա մուրհակը լրացրեց, որ պարտքը երաշխավորվում էր ՀՀ-ի ամբողջ ունեցվածքով:) Փողից բացի, Հայաստանի իշխանությունը խոստացել է տրամադրել բոլոր անհրաժեշտ շինություններ, որպեսզի Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեն կարողանա հոգալ գաղթականների առօրյան ու նրանց առողջական վիճակը:

Կյանքի կոչելով այդ վավերագիրը, Ջ.Գրինը մարդ ուղարկեց Ադրբեջանն ու Կուբանը, հաց առնելու հրամանով, իսկ մայիսի 20-ից մինչև հունիսի վերջը Բաթումն եկան 5 նավ՝ որոնցից բեռնափաթել են 21 հազ.տ. մթերք: Անհատույց նվիրատվությունն միասին վերցրած, 1 կգ. հատիկի ինքնարժեքը հավասար էր ընդամենը 20 ցենտի: (1920թ. գարնանը այն նվազելու է ընդհուպ մինչև 13 ցենտ:) Բեռներն ուղեկցում էին կենտրոնն հղած ճեպագրերը հայ իշխանությունների տկարության մասին՝ մի քանի ամերիկացու կողոպտեցին հենց Երևանում: Աշխատանք ծավալելու համար նրանք պատվիրեցին Աստաֆյանի վրա գտնվող կիսավարտ Գիմնազիան և Օրիորդած մեծ սեմինարիան, որոնց պետք է լրացներ բերդի (կամ Քանաքեռի) զորանոցն և Անգլիական այգին իր շինություններով: Այժմ դատարկ Սեմինարիան նախ ծառայել է որպես զինվորական հիվանդանոց, տիֆով վարակվածների համար: Իրենց հերթին, ՀՀ պաշտոնյաններն էլ դժգոհ էին օգնողների կազմակերպչական ունակություններից: Բրիտանացի զինվորները ապահովում էին հանրապետության 18 գնացքի և 520 վագոնի պահապանում, սակայն երկաթուղային ուղիներից դուրս այլանդակություն էր:

Հուլիսին Ջ.Գրինն ու Բ.Մուրը բողոքներով դիմում էին Փարիզ, որ Վրաստանի իշխանություններն ոչ միայն մատակարարումների 15 տոկոս պահանջում են որպես տարանցման վարձ, այլև օրերով ընդհատում փոխադրման աշխատանքը, առաջ քաշելով տնտեսական ու հողային-քաղաքական պահանջներ: Արձագանքելով այդ հերագրերին, հուլիսի 16-ին Հ.Հուվերն Փարիզյան վեհադաժովին ներկայացրեց մի հուշագիր, //-101 ու 2 օր հետո Ժ.Կլեմանսոն խստորեն նախատեց

Թիֆլիսը<sup>11</sup>: Արդյունքում, ապրիլ-հուլիս ամիսներում Յայաստանն անցկացվեց 50 հազ.տ.պարեն, որոնցից 3,3 հազ.տ.կաթ էր, ու 500 տ.քինաքինա և օճառ: //102

Օգոստոսին դրությունը զգալիորեն լավացավ: Հիմա Կոնգրեսը՝ իր հատուկ որոշումով ՄԱՄՕԿ-ին շնորհեց ազգային կարգադրություն, իսկ նրա նոր ղեկավար՝ Ուիլյամ Նեֆյու Յասկելը ամսի 15-ին ժամանեց Թիֆլիս որպես Յայաստանին օգնության գծով Դաշնակիցների գերագույն կոմիսարը: Նա վերակազմեց ամբողջ ցանցը, բացելով 6 տեղամաս: Նրանք բոլորը՝ Ղարաքիլիսայի (դ-ր Պրատ), Կարսի, Սարիղամիշի (կապիտան Կին), Երևանի (գնդապետ Չ.Տելֆորդ, ԱՆՎ-ի տնօրեն Չ.Ս. Ֆորբս) կամ Ալեքսանդրապոլի (փոխ-գնդապետ Դ.Ռոբինսոն, մանկատների պետ կապիտան Վերներ) մասնաճյուղերը կատարում էին Թիֆլիսի հրամանները (շտաբի պետ Ջ.Ռիա, այնուհետև Է.Դելի): Կենտրոնական բաշխիչ պահեստը զետեղված էր Ալեքսանդրապոլում, որտեղ Կազաչի պոստում կարողացել են տնավորել են 50-ից մինչև 60 հազար փախստական: Ու միայն բանակի հետ համագործակցության պարագայում գլխավորն էր երևանյան տեղամասի պետը:

Օգոստոսի 21-24-ին Ու.Յասկելը առաջին անգամ եկել է Յայաստան, հաճախելով Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ ու մայրաքաղաքը: //-103 Գնդապետը անմիջապես զգուշացրեց, որ արևմտահայերի տունդարձը սկսվելու է 1920թ. գարունից ոչ շուտ, ու հայերին խրատեց, որ հետևեն պաշտպանողական մարտավարության: Ամսի 22-ին՝ պառլամենտում ելույթ ունենալու ժամանակ, ինքը խոստացավ ուշացնել բրիտանական զորքերի մեկնումը կամ ապառվել նրանց փոխարինումը այլ երկրների համակազմով: Փարիզյան վեհաժողովի համար կարևոր չէ, հորդորում էր կոմիսարը, թե ով է հսկում այլ կամ այն հողը, իսկ Դաշնակիցներին հղած իր զեկուցման մեջ նշեց, որ առկա իրադրությունը «սարսափելի է ցանկացած նկարագրումից»: Նրա ժամանման պահին ու հատկապես բրիտանական ստորաբաժանումների մեկնումից ի վեր, «ադրբեջանցիները՝ թուրք սպաների գլխավորությամբ, սկսեցին ներխուժումն ու սահմանամերձ գյուղերի կոտորած... Հունիսի 7-ին ադրբեջանցիներն սպանեցին մեկ գյուղում 640 հայուհիներ»<sup>12</sup>: Գնդապետը ստիպված էր չեզոք գոտի հաստատել և աշխատակիցներին ուղարկել Նախիջևանն (փոխ-գնդապետ Է.Դելի), Դավալու (փոխ-գնդապետ Ջ. Շելլի), Ալավերդի (մայր Չ.Լիվինգստոն), նաև Ախալքալաք (Պայրտոն)<sup>13</sup>:

<sup>11</sup> ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.20, մ.3, ք.148-148բ, 156-157; գ.249, մ.1, ք.234; գ.269, ք.49; գ.303, ք.11-11Ա, 13; գ.304, ք.1, 5, 11-17, 31, գ.355, մ.4, ք.272-275; գ.638, մ.1-3, ք.54-54Ա, 65-74Ա, 121-123Ա, 187-188բ, 193-196; US NA, RG 256, 184.021/9; Ս. Վրացյան: Նշվ.աշխ., էջ 256; R.Hovannisian. Op.cit., vol.II, p.89, 141-145:

<sup>12</sup> H.Hoover. Op.cit., p.388. Խոսքը, անշուշտ, հունիսի 4-7-ի Շուշվա կոտորածի, և Ղայբալիքենդի կորուստների մասին է:

<sup>13</sup> ՀԱԱ ֆ.200, ց.1, ք.196-197; ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.175, մ.1, ք.34-35; գ.319, ք.24; ց.2, գ.37, ք.1-3, 7-8; US NA, RG 59, 860J.48/1, 8; Papers relating to the foreign relations of the

Կենտրոնական գրասենյակն ուներ վարչական, պայմանների ու կենսական պահանջների ուսումնասիրման; //-104 որբանոցների, հիվանդանոցների և արդյունաբերական աշխատանքի; գնումների, պահեստավորման, փոխադրամիջոցների և բաշխման, ինչպես և նախահաշիվների պատրաստման, ծախսերի հսկման ու փոխանակման բաժիններ: Իր պետից բացի, յուրաքանչյուր տեղամասը ուներ իր նախագահով հանդերձ բաշխական կոմիտե, որն գործում էր ՀՀ մատակարարման նախարարի հրահանգների համաձայն: Կոմիտեներ պատասխանատու էին հատիկի և ալյուրի ճիշտ բաշխումների համար: Նրանք ունեին ինչազուրկ բնակիչների, նրանց գտնվելու վայրերի ու ներմուծվող ալյուրի մասին տվյալներ: Հանրապետության քաղաքականության համաձայն, վճարունակ անձինք գնում էին սնունդը, սակայն բանակն, աղքատներ, փախստականներ, որբեր ու զինվորական հիվանդանոցներ այլուրը ստանում էին անվճար:

(Ըստ 1920թ. հունվարյան չափաքանակի, զինվորներ ու աշխատող գաղթականներ օրական ստանում էին 450 գ.ալյուր կամ 600 գ.հաց, ոչաշխատող փախստականներ ու որբեր՝ 225 գ.ալյուր կամ 300 գ.հաց: Բանակում ամսեկան ավելացնում էին 450 գ.օճառ: ) Պատրաստի հաց առավելությունն ուներ աղացվածքի նկատմամբ, ուստի որտեղ հնարավոր է՝ ՄԱՕ-ն փուռեր էր բացում: Տեղամասերի վերաբերյալ բոլոր տվյալները տրվում էին հայկական կառավարությանը, որն ուներ շտեմարաններ հսկելու իրավունք: Հսկել, բայց ոչ հրամաններ արձակել նրանց գործունեության վերաբերյալ: Բացի դրանից, հանրապետության իշխանությունները ստանձնեցին տեղամասերի անվճար վառելափայտով ապահովումը<sup>14</sup>:

1919թ. սեպտեմբերին Ու.Հասկելը հանրապետությանը մեկ կատարեց նոր տեսչական շրջագայություն և ամսի 27-ին ՄԱՕ-ի Նյու Յորքի շտաբակայան ուղարկեց բավականին քաղաքականացված զեկուցում: Նա գրեց, որ թուրք և ադրբեջանական գործակալները կազմակերպում են բազմաթիվ տեղի մահմեդականության խռովություններ, ինչի հետևանքով հայ բնակչությունը թողեց Իգդիրը, անհանգիստ է Կարսում ու Երևանում: Պարենը հերիք էր մինչև դեկտեմբերի 1-ը, մինչդեռ, 800 հազ.հոգի՝ նրանցից 250 հազ.տնանկ ու 150 հազ.երեխա, պետք է խնամել մինչև 1920թ. աշունը: //-105 Կենդանի մնալու համար, դեկտեմբերից սկսած, նրանց հարկավոր է ամսեկան 7 հազ.տ.հատիկ: Ծավալից կեսը ապահովում էր Նովոռոսիյսկը, ու հացի պակասը լրացներու համար յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անհրաժեշտ է տեղ հասցնել գոնե մեկ նավ: Բեռների՝ կես միլիոնի արժողությանը ցուցակում կային

United States: the Paris peace conference, 1919. 12 vols., Wash., GPO, 1942-1947, vol.VII, p.839-840; Ս. Վրացյան: Նշվ.աշխ., էջ 320-323; J.B.Gidney. A mandate for Armenia. Oberlin, Ohio; Kent State University, 1967, p.170:

<sup>14</sup> ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.638, մ.1-3, ք.21-22, 32, 37-38, 46-52, 110-112Ա, 117-120, 207-207Ա, 225:

գործիքներ, գյուղտընտեսական ու խոհանոցի պիտույքներ, շոր, կոշիկ, ասեղ, մեխ, էլեկտրալամպեր, ապակի, օճառ, քինաքինա, ամենապարզ դեղամիջոցներ, ինչն հնարավոր էր վաճառել, տեղական արտադրանքի դիմաց:

Պատվիրածից բացի, Ու.Հասկելը խնդրում էր հասցնել նրա անձնակազմը 65-ից մինչև 100 ոքի և կոչ էր անում սկսել երկաթուղիների հսկողություն: Նման բան՝ Բաթուն-Ալեքսանդրապոլ հատվածում նախատեսված էր հայ-վրացական համաձայնագրով, որն կնքվել է 1919թ. հոկտեմբերի 3-ին, գերագույն կոմիսարի պաշտոնակատար գնդապետ Ջ.Ռիայի միջնորդությամբ: Նրանց՝ կառախսներին, առավելագույնս 24 ժամ կարելի էր հապաղել բեռնաթափման վայրերում<sup>15</sup>:

Հետագա իր զեկուցումներում Ու.Հասկելը գրեց, որ Ալեքսանդրապոլում տնավորված փախստականները լայնորեն ներգրավվում են ճանապարհների բարեկարգմանը, կանայք ու հանրապետության 49 որբանոցներում պահվող 30.225 երեխա զբաղված են թեթև արդյունաբերության մեջ: Նա հույս էր հայտնում, որ նրանց արտադրանքի դուրսբերման շնորհիվ մարդիկ ի վիճակի կլինեն հոգալ իրենց կենսական կարիքը: ՀՀ-ի 14 հիվանդանոցներում կար 1.800 խնամառու: Բժիշկական ցանցը՝ ինչպես և այլ ծառայություններ, առաջարկվում էր ընդարձակել: Բացի դրանից, ՀՀ լուսավորության նախարարությունը հանձն առավ որբանոցներին տրամադրել դպրացական դասագրքեր, ուսուցիչներին ու ֆիզդաստիրակության մարզիչներին, որպեսզի երեխաներ ունենան կանոնավոր ուսում, իսկ ՄԱՕ-ի ղեկավարները խոշորացրին Երևանում և Ալեքսանդրապոլում գործող իրենց մանկատները: //106

Բարեգործների աշխատանքն ու ՀՀ կենտրոնական ու տեղի պաշտոնյանների հետ նրանց հարաբերությունները ինչպես և առաջ, միապաղաղ չէին: Հիվանդանոցներում սուր քամի էր՝ պատուհաններ ապակեկորված չէին և անկողնու պարագաների մեծ պակաս էր: Մաքրության աստիճանն ու սննդի որակը նմանապես պախարակելու տեղիք էին տալիս, իսկ որբանոցներ բացելու համար ամենից առաջ զբաղեցնում էին դպրոցների շենքեր: Ղարաքիլիսայում, օրինակ, 400-500 որբեր 1920թ. փետրվարին պետք է տեղավորվեին 125 սանիկ ունեցող դպրոցում: Հարաբերությունները հատկապես լարված էին Ալեքսանդրապոլում, ուր կայագործի պարեկ գեներալ-մայոր Խաչատուրովը դեմ էր գաղթականների դեպի Կարս տանող շրջաններում շատացման ու հաստատմանը: Ինքը վախենում էր թուրք ջոկատների հարձակումներից:

Չմեռվա համար, երբ ամերիկացի Վերների դեմ բողոքներ առանձնապես ուժեղ էին, ՄԱՍԿ-ի նախագահն հայցում էր գոնե մեկ հետևակի գունդ՝ հաղորդակցման ուղիներ պաշտպանելու և ոստիկանական պարտականություններ կատարելու համար: Եթե Միացյալ Նահանգ-

<sup>15</sup> ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.175, մ.1-2, ք.73, 167; գ.339, ք.7-9Ա; գ.353, մ.1, ք.63-68:

ները կկարողանան ընդլայնել իրենց ներկայությունը, գունդը կդառնա այն միջուկը, ուր կկազմակերպվի տեղի ծառայողների հավաքագրում: Եթե ՄԱՕ-ի տնօրենը բավարարվում էր (2 հազ.մարդ պարունակող) մեկ գունդով, ապա Ծերակույտն ու Փարիզում գործող հայկական պատվիրակությունը մեջբերում էին 50 հազ.ծառայողների թվեր<sup>16</sup>:

Ջոկատի վերաբերյալ հնչող հայցը հաստատական էր, քանի որ ամերիկացիք ստիպված էին դադարեցնել իրենց նպաստամատույց գործունեությունը թուրք և ադրբեջանական սահմանների երկայնությամբ: Բրիտանական ստորաբաժանումների հեռանալուց ի վեր «քրդեր ու թաթարներ համոզված են, որ Դաշնակիցներն վերջնականապես լքեցին Չայաստանը», - հաղորդվեց հոկտեմբերի 14-ի հեռագրում: Երկու ամիս անց հանրապետության ռազմական նախարարությունը հաստատում էր. մայր Պայտոնը, որն Ախալքալաքից եկավ Չըլդիր, անասուն գնելու նպատակով, զարմացած դիտում էր Խոզապինի արևմտյան ափում գտնվող //-107 Կանարբեյ գյուղում անցկացրած զինամարզանքը: Այն անցկացնում էր ադրբեջանցի շտաբս-կապիտանը, որին գործուղել էին խռովություն կազմակերպելու: Մայրի վկայությամբ Կզըլքիլիսե և կարափափախ թուրքերի Կարակալա գյուղերում զենքերի առատություն էր, նեռարյալ գնդացիներ ու թնդանոթները<sup>17</sup>:

Ավելի ուշ, դեկտեմբերի 18-ին Երևանում տեղի է ունեցել կառավարության գլուխ Ա.Խատիսյանի, պարենավորման ու ֆինանսների նախարար Ս.Արարատյանի և խնամատարության նախարար Ա.Բաբալյանի հինգժամյա խորհրդակցությունը Եվրոպայից վերադարձած Ու. Չասկելի հետ, որին ուցեկցում էին քաղաքական մասի պետ Պ.Կելլոչ, պարենավորման գծով վարիչ Յուլիա և մայրաքաղաքում կոմիսարի ներկայացուցիչ գնդապետ Չ.Տելֆորդը: Հանրապետության իշխող անձինք դժգոհություն են արտահայտել, որ նրանք այլևս առնչություն չունեն պարենի բաշխման գործի հետ: Իրենց կարծիքով, ամերիկացիք պետք է տնօրինեին եղած պահեստները, բայց պաշարների բաշխումը պետք է անցներ կառավարական կոմիտեի ձեռքն, ու միայն նրան կարելի էր վաճառել խտացրած կաթը, շաքարն, լոբին ու հագուստը: Կողքի վերամիավորումը աղագործության հնարավորություն էր ընձեռում, ինչն՝ բամբակի վաճառման հետ միասին, նպաստում էր ռուբլու կուրսի կայունացմանը:

Արանձնահատուկ ուշադրությամբ քննարկեցին մոտակա ցանքի խնդիրները: Հարկավոր էր առավելագույնս օգտագործել տեղական հնարավորությունները, քանի որ դեկտեմբերի ամսին ԱՆՎ-ն վերջացնում էր Չայաստանում իրականացվող իր բոլոր միջոցառումները: Ընդ որում, ալյուրի և հատիկի մի մասը հնարավոր էր գնել Չյուսիսային

<sup>16</sup> ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.175, մ.5, ք.473; գ.319, ք.14-15; գ.353, մ.1-5, ք.39, 473; գ.576, մ.2, ք.78; գ.638, մ.2-3, ք.85Ա-89Ա, 117-120Ա, 173-176; US NA, RG 59, 860J.48/1, T1192, Roll 7, f.89-94/ՀԱԱ մհ36:

<sup>17</sup> ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.353, մ.2, ք.109; գ.638, մ.1, ք.56:

Կովկասում, սակայն այնտեղ չէին ցանկանում տեսնել իրենց արտադրանքը վրացական շուկաներում: Ուստի կոմիսարը պարտավորվեց անցկացնել հացամթերքը ամերիկյան դրոշի ներքո: Մայրո Պ.Կելլոչին հանձնարարել են փոխանակել հանրապետության ներսում ամերիկյան ապրանքի մի մասը սերմացու ցորենի, գարու և կորեկի հետ: Ու վերջապես, Ու.Յասկելը չէր հանդիմանում հայ բանակում անգլիացի հրահանգիչներին ունենալուն: Նա խոստացավ համաձայնության գալ սևծովյան բանակի հրամանատար Ջ.Միլնի հետ ու Վրաստանի միջոցով Յայրենիք անցկացնել Յյուսիսային Կովկասում հայերից հավաքագրած ստորաբաժանումները, ինչն զգալիորեն կուժեղացնի ազգային բանակը<sup>18</sup>:

Հաջորդ այցելության ժամանակ՝ 1920թ. հունվարի 30-ից փետրվարի 4-ը, Ու.Յասկելը (իր տիկնոջ հետ) հունվարի 31-ից սկսած երեք օր անցկացրին Ալեքսանդրապոլում, որտեղ //-108 գնդապետը ողջունեց համալսարանի բացումը: Այնուհետև ինքն այցելեց մայրաքաղաքն, Էջմիածինը, Ղարաքիլիսան և ամսի 4-ին՝ Կարսը, գործնական զրույցներ է ունեցել դահլիճի ղեկավարի հետ: Կոմիսարին դիմավորեցին դրոշակներով և արևմտահայերի հանրահավաքով: Բազմությունը՝ իր ընդունված բանաձևով, պահանջել էր արագացնել միավորումը: Ինքը՝ ՄԱՍԿ-ի պետը, գերազանց գնահատեց գործերի առկա վիճակը, հատկապես շեշտելով Կարսի ծառայությունների վերակառուցում և ընդլայնումը: Ամենուր պակասել է փողոցներում մուրացիկների քանակը, բարելավվել է իրենց արտաքին տեսքը, «համարյա ոչ մի տեղ չէին հանդիպում բարձիթողի արած երեխաներին»:

Նրա ստուգմանը նախորդեց Ա.Խատիսյանի գրավոր դիմումը. թույլատրել ՀՀ կառավարության սեփականություն հանդիսացող 1.500 տ.ամերիկյան ալյուրի փոխանակումը 3.000 տ.սերմացուի հետ: Եվս 4.000 տ. հնարավոր էր ստանալ ՄԱՕ-ին պատկանող այն ապրանքի փոխանակության ձևով, որն հասցրել է «Կիկապու» նավը: Առաջարկվող գործողությունները կարող էին ապահովել Հայաստանն ինքնաբավ երկիր դարձնելու ծրագրի առաջին փուլը: Գյուղտնտեսության նախարարության գնահատանքներին համաձայն, մինչև մարտի կեսը տեղ հասցրած 181,2 տ.սերմացու արդեն աշնանային բերքահավաքից սկսաց ապահովում էին հասարակության ապրուստի միջոցը: Մթերքի առումով անվտանգ վիճակը թույլ էր տալիս հրաժարվել հետագա հացահատիկային վարկերից: Միաժամանակ գնդապետը անհանգստանում էր, որ մազութի բացակայության պատճառով կանգ են արել բամբակով ու վառելափայտով բեռնված վագոնները: Քանի որ բամբակը կանխորոշում էր Հայաստանի վճարունակությունը, մազութի և նավթի խնդիրը ինքը լուծեց<sup>19</sup>:

<sup>18</sup> ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.20, մ.3, ք.148-148բ; գ.638, մ.1-2, ք.1-2, 124-125, 135-136:

<sup>19</sup> Ibid., գ.249, մ.1-2, ք.73, 85, 143, 280; գ.638, մ.1-2, ք.12-16, 56-67Ա, 70, 106-108; Ս. Վրացյան: Նշվ.աշխ., էջ 383-385:

Մարտի 3-9-ին Գերագույն կոմիսարը իր հերթական շրջագայության ժամանակ ամսի 5-ին այցելեց Սարիղամիշը, 6-ին՝ Կարսը, 7-ին՝ Ալեքսանդրապոլն, Երևանն, Էջմիածինն ու Ղարաքիլիսան: Կողմերը հասան համաձայնության բանբակի գինը նվազեցնելու, հանրապետության արտեր մշակմանն համար հարկավոր «Ֆորդ» 5 տրակտորներ և «Օլիվեր» 11 գութան առնելու հարցերի շուրջ: Բոլորից նեղում էին բեռների առաքումը Բաթումից, հողագործությունն ու ներքին իրադրությունը<sup>20</sup>:

Ապրիլի 16-19-ին կայացած հաջորդ այցելության ընթացքում կարելի էր արձանագրել, որ ցանքի նվազագյուն կարիքները բավարարված են ու Հայաստանի Հանրապետությունը ստացել է լրացուցիչ 27,2 տ.սերմացու: Ընդհուպ մինչև Ալեքսանդրապոլում բռնկված մայիսյան փոստամբությունը ամերիկացիների աշխատանքը ընթանում էր իր հունով, սակայն մայիսի 4-ին Ու.Հասկելը հապճեպորեն Բաթում տեղափոխեց իր շտաբակայանի 40 սպաներին, իսկ Չ.Տելֆորդը՝ իր 24 աշխատակիցներով, երեք շաբաթներից ավելի բացակա էին Երևանից: Սա իր հետ բերեց սննման կետերի փակում ու հացի ճգնաժամ, ինչն հանգեց խանութների վրա հարձակումների: Հ.Օհանջանյանը խնդրեց ազդեցություն գործել ամերիկացու վրա, որպեսզի նրա սպայակազմը մնա Հայաստանում: Ինքը՝ գնդապետն, երկու ամիս անցկացրեց սև-ծովյան նավահանգստում: Թեև //-109 մայիսի 6-ին իսկ այլուրով ու մանկական սննդով բեռնված 60 վագոն ուղղվել են Սանահինի կայարանը, որտեղ նրանց պետք է փոխարինեին դատարկների հետ, իսկ բեռը շարունակեց շարժվել մինչև Գյումրի<sup>21</sup>:

Հաջորդ երկու ամիսը հանրագումարային էին Գերագույն կոմիսարի գործունեության համար, ուն լիազորությունները լրանում էին օգոստոսի 1-ին: Այդ օրն որպես ելակետ դիտելով, կարելի է ընդհանրացնել օգնության ամբողջ մեծ ծրագիրը, ինչն ներառում է այդքան անհրաժեշտ մատակարարումների վարձատրման թեմա: Վճարման հիմնական միջոցը բանբակ էր, որոշ չափ՝ շինանյութեր էին, գորգեր, ծխախոտն և ոչխարենին, 1919-1920թթ. նրանց արտահանումը աճել է 20 տոկոսով: Հատկապես գրավիչ էր բանբակը, որն ուզում էին ձեռք բերել նաև անգլիացիք ու ֆրանսիացիք:

1919թ. սեպտեմբեր - 1920թ. փետրվարի ժամանակամիջոցում հանրապետությունը հաջողել էր ծախել այդ հումքից ավելի քան 95 տ.՝ 1 կիլոգրամը 1,25 դոլարի արժողությամբ: Ընդ որում, Հայաստանի 1,5-2 հազար տնաշխատ մանողուհիներ նրանից պատրաստել էին 160.180 մ.կտավ, այդ ծավալի 4 տոկոս բաշխեցին Էջմիածնում, Նոր Բայազետում, Ղամարլուում, Աշտարակում ու Քանաքեռում: Այնտեղ՝ գլխավոր

<sup>20</sup> ՀԱՍ Ֆ.200, ց.1, գ.576, մ.3, ք.130Ա, 136; գ.638, մ.2-3, ք.114-115, 163, 166-169Ա, 180:

<sup>21</sup> Ibid., գ.249, մ.2, ք.352, 369-370, 583, 681; գ.576, մ.2-5, ք.54-61Ա, 64, 69-72Ա, 77-78Ա, 110-110Ա, 114Ա-115, 123-123Ա, 130Ա, 142-142Ա, 174-174Ա, 185-185Ա, 240; գ.638, մ.3, ք.182-185, 190, 202-216, 219-223, 227-229Ա, 239-240:

արհեստանոցն էջմիածինն էր, կտորեղենը դառնում էր վերմակ, սավան, բարձ ու բարձերես, սրբիչ, վերարկու, ձեռնոց, բաճկոն, զգեստ, գլխարկ ու շապիկ, որոնք առաքվում էին որբանոցներ, հիվանդանոցներ ու չքավորներին: Բամբակի պետական մենաշնորհը հունքի տերերին վճարում էր 2,5 ռոբ. մեկ կիլոգրամի համար, 1919թ. ամռանը սա գանձատուն էր բերում 332 տոկոս եկամուտ: Սական հաջորդ տարվա մայիսի 6-ի, Յ.Յուվերի և Չ.Տելֆորդի վերահաշվարկով շահավետությունը նվազեցրին մինչև 200 տոկոս:

Լրացնենք, որ հիմնական` ապրիլյան համաձայնագրերից բացի, 1919թ. օգոստոսի 7-ից 1920թ. հունվարը հայկական կառավարությունը ի դեմս Յ.Քաջազնունու մշակեց ևս մեկ պայմանագիր` Չիկագոյի միջազգային կորպորացիայի հետ: Վավերագրի հետ ծանոթացել են ինչպես պետքարտուղարն, այնպես էլ նախագահ Վ.Վիլսոնը: Առաջին դեմքը նույնպես ամսին Հատիկային կորպորացիային թույլ տվեց «ապառիկ, կամ որևէ այլ եղանակով» ծախել 35 հազ.տ.հատիկ և այլուր: Իսկ Ռ.Լանսինգը դեկտեմբերին խնդրել էր հստակեցնել Հայաստանի հատուկ ներկայացուցչի լիազորությունները, քանի որ գործարքի ծավալը 50 մլն.դոլար էր: Ապրանքը պետք է ապահովագրեին պատերազմի բոլոր վտանգներից ու հասցնեին սևծովյան նավահանգիստ կամ հանձնեին ՀՀ գնման հանձնաժողովին անմիջապես Նյու Յորքում:

Սկզբից 1 կգ.հատիկի գինը 1.4 դոլարից բարձր էր, ուստի փաստաթղթի մշակումը շարունակվեց շուրջ կես տարի: Բեռների որակը կարելի էր վիճարկել 15-30 օրերում, իսկ իրավարարի վճիռը կայացվում էր անմիջապես: Հունվարյան` վերջնական օրինակի համաձայն, ապահովագրության ու փոխադրածախսը կրում էր ՄԱՕ-ն, իսկ առաջին նավերը դուրս են եկել ծով Բալտիկում ու Նյու Յորք քաղաքներից նույնպես 26-ին («Վեստ Ռարիտան»), 29-ին («Դելիս»), ու դեկտեմբերի 10-ին («Վեստ Պոկասետ»), կրելով 18.408 մ.տ.հատիկ` մեկ կիլոգրամ 12 ցենտ արժողությամբ: //-110 Որպես վճարման միջոց, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ամերիկյան բանկին հանձնեց մուրհակներ, իսկ վերջինը 1919 ու 1920թթ. հատուցում էր կորպորացիային, գումարած տարեկան 6 տոկոս հավելավճար: Մեկուկես տարի ուժի մեջ լինելուց հետո մուրհակները պետք է փոխարինվեին պետական բոներով:

Նրանց բացթողումը հանդիսանում է հայ իշխանության` ԱՄՆ-ի և սեփական բնակչության հետ ֆինանսական հարաբերությունների առանձին ակնարկ: Երբ 1920թ. հունիսի 5-ին ու 10-ին մշակում էին Օրենք Հայաստանի անկախության փոխառության մասին, Յ.Օհանջանյանի բյուրո-կառավարությունը թողարկեց 20 մլն.դոլ.փոխառություն ԱՆՎ-ի հացը հատուցելու համար: Փոխառությամբ նախատեսվում էր 6 տոկոս եկամուտ ու 8,5 տոկոս տարեկան մարում` 1923թ. հունվարի 2-ից 1930թ. հուլիսի 2-ն ժամանակամիջոցում: Այսպիսով, ՀՀ իշխանությունները պետք է տարածամկետով վերադարձնեին 22,9



մլն.դոլ.: Գործի դնելով պաշտոնական Վաշինգտոնի արտոնյալ գներ ու հացի վարկը, Երևանում ծրագրավորել են ձեռք բերել ապրանքի նոր ծավալ: Այն փոխհատուցելու նպատակով Կ.Պոլսում, Թիֆլիսում ու Բաթումում տեղադրում էին Անկախ Հայաստանի ոսկի փոխարության բաժնետոմսեր, որոնց սկզբից ուզում էին հասցնել մինչև 50 մլն.դոլ., խոստանալով 7 տոկոս հասույթ ու տարեկան 2,5 տոկոս շահ՝ անվանական արժեքը մարելու պահին: Ռիսկը պակասեցնելու համար, առաջին վարկի 20 միլիոնից 15-ը դնում էին պաշար, իսկ երկրորդ փուլի 54,75 միլիոնի պարտաթղթերը ցանկանում էին հատուցել 1921թ. մարտի 1-ից մինչև 1980թ.:

Այսպիսով, ԱՄՆ-ի գանձատնից ստացած 15,5 մլն.դոլ. արժողությամբ բեռների դիմաց, ՀՀ իշխանությունը իր բնակչությունից 50 մլն. պարտք էր վերցնում՝ Վաշինգտոնից հանրապետության պաշտոնական ատյանների նկատմամբ ցուցաբերած վստահության հետևանքով նա 3,2 անգամ ավելի դոլար և ոսկի էր ուզում ստանալ իր հայրենակիցներից: Ու թեև Վրաստանում գործը որևէ թափ չի ստացել, ու Թիֆլիսի բոլոր ունևորները զերծ մնացին մասնակցելուց, մասնավոր դրամագլխի նման ներգրավումը Հ.Հովերի ծրագրին բնորոշ արդյունքներից էր: Սա է արտաքին քաղաքական լավ հարաբերությունների իսկական չափանիշը: Իսկ բացասականն այն է, որ մասնավոր դրամագլխին պարտքեր աճեցնելու պարագային, երևանյան դահլիճը չէր չաշվարկում սեփական ազգային տնտեսության շահավետությունը, թեև հենց դրա հաշվին պետք է մարեին բոլոր գումարները: Ու երբ 1920թ. օգոստոսի 27-ից վարկը սկսել էր գործել, հայկական չեկերի արժույթը նվազել էր 7 անգամ, այսպես որ 1 դոլարը հավասարվեց 7.000 չեկերին<sup>22</sup>:

Ամբողջությամբ վերցրած, Հայաստանի Հանրապետությունը ստացել է 119.149 տ.սննդամթերք //-111 (այդ թվում՝ 41.216 տ.հատիկ), 16.614 տ.հագուստ, դեղորայք և այլ բեռներ, 28.795.426 դոլ.արժողությամբ: Ընդհանուր գումարից 12.671.722 դոլ. ՄԱՕԱԿ-ի, ՄԱՕ-ի և Կարմիր խաչի նվիրատվությունն էր, 15.492.304 դոլ. ԱՆՎ-ի և Հատիկային կորպորացիայի վարկեր էին ու 631.400 դոլ.՝ Մեծ Բրիտանիայի վարկեր<sup>23</sup>:

Հանրագումարի բերելով շարադրանքը հնարավոր է նշել, որ բարեգործությունը պետական օգնության ծրագրերի նախադրյալ և ողմնաշար է հանդիսանում: Վերջինները, թեև մաքուր քաղաքականությունը չեն, այնուամենայնիվ, սկիզբ են առնում որպես հասարակական երևույթ և որպես հասարակական կարծիքի լուրջ ճգնաժամին պատասխան: Նույնիսկ համեմատաբար փոքր չափերով ցույց տված օգնութ-

<sup>22</sup> ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.20, մ.2-3, ք.138, 151-157, 183Ա, 185; գ.249, մ.1, ք.234; գ.355, մ.1-4, ք.25-25Ա, 210, 305, 307, 320, 324; գ.576, մ.1-3, ք.46-50, 142-142Ա; գ.588, մ.1-2, ք.58-58Ա, 69-74, 77, 151-155; գ.605, ք.24-25Ա, 30-33Ա, 38-44Ա, 47-48; գ.638, մ.1-3, ք.4-5, 241; US NA RG 59, 860J.4016/21, 59; RG 256, 867B.5018/9:

<sup>23</sup> H.Hoover. Op.cit., p.385-389; ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.638, մ.3, ք.235-238Ա:

յունը (57,6 դոլ.սահմաններում) ապահովում էր 1 խնամարկյալին 238,3 կգ.կենսականորեն անհրաժեշտություն ունեցող մթերք և որոշող դարձավ կես միլիոն գաղթականներից 300 հազար փրկված հոգիների համար: Հետևաբար, օգնությունը որպես այդպիսին չի կարող անտեսվել կառավարման համակարգում: Գովեստ ու ստացածի ճիշտ գնահատականը ազդուրում են հասարակական մթնոլորտը, նպաստում են ցնցման ու նրա ուղեկից բացասական դրսևորումների մեղմացմանը, բարեհաճ կերպով ազդում են երկու կողմերի վրա: Ձևավորվում են հովանավորման ու մշակութային համագործակցության հարաբերությունները, նրանք կարող են ուղեկցվել տնտեսական արտոնություններով, իսկ երկկողմանի հարաբերությունների ռազմականացումը դեմ է առնում զգալի խոչընդոտներին: Եզնաժամային բժիշկության նման, արագ, անվրեպ ու հարկավոր պահին հասցրած օգնությունը կարող է վճռողական դեր խաղալ նույնիսկ ընդարձակ տարածաշրջաններում: //-112

©

18 էջ

«Լրաբեր հասարակական գիտությունների»: Երևան, 2008, N° 1 (621), էջ 96-113 (հրապարակվել է անգլերեն):